Ստրպետ

Ժառանգներ

ԺԱ, ԺԲ

ԺԱ

Բավական չէր Քյալաշի ներքին տանջանքը, նրան ավելի հուզում էին Անթառամի անվերջ նախատինքներն ու կշտամբանքները: Թշվառ կինը շուրջը կատարված անթիվ անգութ տեսարաներից զգացված, վշտի սաստկությունից բորբոքված, հարբածի ու խելագարի նման անխնա ամեն օր կծու ու սուր խոսքերով ծակում էր Քյալաշի սիրտը, մերկացնելով նրա անարգ և ստոր ընթացքը:

Անթառամը, դիտելով Մամոյի աչքերը, արդեն վաղ էր զգացել: Թե ի՞նչ մտքեր էր որոճում անօրենը և այդ բանը ուղղակի կերպով մի քանի անգամ հայտնել էր ամուսնուն, իսկ վերջինս չհասկանալ ձևացնելով, միշտ լռել էր այդ կետի վերաբերմամբ: Մինասի աղջկա նկատմամբ Մամոյի սառնասիրտ վարվելու պատճառը մասամբ թեև նախազգացել էր Քյալաշը, բայց երբեք չէր կարողանում համոզվել, որ այնքան ապերախտ կլինի յուր բարերարը: Իսկ վերջերքը, դայմաղամի փոխվելուց հետո, երբ լսեց ու դիտեց, թե ինչպես ազատ անօրենը գիշեր-ցերեկ թափառում էր յուր տան շուրջը, ամոթից ու երկյուղից չհամարձակվելով վիշտը արտահայտել, ընկավ մելամաղձոտության մեջ և սկսեց առանձին թափառել օրվա մեծ մասը գեղի շուրջը, գետափի մոտ և ծառերի շվաքի տակ, այնպես որ խույս էր տալիս մարդու երես տեսնելուց: Այն աստիճանի հասավ, որ գեղի պառավներն ասում էին, թե աստված պատժեց

անմեղներին, որբերին ու այրիներին տանջել տվողին:

Մամոն ամեն բան դիտում էր և հրճվում: նա վերջապես հույս ուներ, որ շուտով կհասնի յուր նպատակին: Բռնությամբ թեև նա կարող էր անմիջապես մտնել ու հափշտակել Անթառամին, բայց նա խոհեմությամբ էր ուզում գործ բռնել, դրացիների ու մեծավորների աչքը կապել և իրեն անմեղ ձևացնել: Թեև գիտեր, որ երբեք չէր զիջանիլ Անթառամը ջինգյանայի կին դառնալ: Ամիրխան քեհյայի կարողությունը նրա ձեռքը գցել, բայց համոզված էր նույնպես, որ առանց մեծ դժվարությունների կարող էր խեղդել մի անտեր կնոջ ձայնը:

Այս մտածություններով մի օր Մամոն աննկատելի կերպով սողաց, մտավ Ամիրխան քեհյայի տուն և Անթառամին գտավ յուր առանձնարանում սև օրը սգալիս: Երկյուղն ու սարսափը հանկարծ տիրեց թշվառ կնոջ, որի լեզուն կապ ընկավ, ուշքը անցավ, մորեցավ . . . Մամոն աղախիններին կանչեց և հրամայեց, որ շուտով ուշքի բերեն տիկնոջը, իսկ ինքը համարձակ հեռացավ:

Այս անցքը մի քանի րոպեում տարածվեց գյուղի մեջ և ամեն բերան վայ տվեց յուր գլխին, որ դեռ էլի ապրում է՝ այդպիսի սև օր էլ տեսնելու համար:

Այս բոլորի վրա պետք է ավելացնել այն անկարգությունները, հափշտակությունները, գողությունները և հայտնի լիքը առաջարկությունները, որոնք կատարվում էին Մամոյի ընկեր Սուլոյի, Հասոյի և սրանց ազգականների ձեռքով գյուղում ու գավառում: Հուսահատեցրել էին թշվառ ժողովրդին, այնպես որ գյուղացիներից շատերը պանդխտության էին դիմել Սթամբոլ ու Թիֆլիս՝ սովից իրենց ընտանիքը ազատելու: Շատերն էլ իրենց հողերից զրկված և Մամոյի ընկերների հետ թշնամացած լինելով, թողնում էին իրենց սիրելի հայրենիքը, ընտանիքով դիմում օտար աշխարհ:

Այս բոլորին մի ճար անելու, կործանումից ազատվելու և անօրեններին էլ գեղից հալածելու համար մի քանի փորձառու ծերեր իրար հետ գաղտնի վշտակցելուց հետո որոշեցին մի գիշեր խորհուրդ կազմել: Ժողովին կանչված էին միայն քսանի չափ ազդեցիկ և ամբողջ գավառին սիրելի մարդիկ:

Բարեկենդանի երկուշաբթի գիշերը, ուշ ժամանակ ծերերը հավաքվեցին Մինասենց օդան՝ խորհրդի: Գիշերը, որ անցյալ տարիներում միմիայն կերուխումի և ուրախության էր հատկացրած, կարմրացրած գառի մսի, հավի, սագի, բադի ու հնդկահավի, փլավի ու քյաշկակի տեղ՝ գարու ալյուրից խավիծ ու փոխինձ էլ չէին գտել անատամ ծերունիները փորները կշտացնելու: Թթի արաղի, Խարբերդի գինու տեղ մածնի չախլամա էլ չէին կարողացել խմել: Հեքիաթներ ասել տալու, տաղեր երգել տալու, սազ ու սանթուր ածել տալու, պար բռնելու փոխարեն սև սուգերը պատած մռայլ դեմքով նստոտել էին ծալապատիկ իրար դեմ և ոչ ոք սիրտ չէր անում խոսք բաց անելու: Մենյակում թագավորում էր տխուր լռությունը, միայն օջախում վառված փայտի բոցերից առաջացած վշտաբեր սուգումը, հանկարծակի ահագին ճայթյունները և երբեմն-երբեմն ստերից բարձրացած սրսփացնող տժտժոցը խանգարում էին նրան: Այդ մեռելային դրությունը ավելի սաստկացնում էր ծերերի վիշտը, որոնք մասամբ այդ ցավերը չզգալու համար անընդհատ լցնում էին իրենց չիբուխների լուլաները Մուշի դաշտից ստացած կոնտրաբանդ ծխախոտով և ագահաբար ծխում:

Հյուրերը տերտերին էին սպասում, բայց տառապյալներին մխիթարելու կանչվածը Մամո բեգին էր զբաղեցնում նորաշեն ապարանքում յուր շողոքորթություններով: Տերտերը թեև գյուղացիներին մուննաթ էր անում, թե գիշեր-ցերեկ բեգի առաջ քծնում, աշխատում էր նրա սիրտը գրավել, որպեսզի խղճա, գթա, ողորմի նրանց և թեթևացնի ծանր լուծը, բայց բուն նպատակը բեգի միջոցով Քյալաշի ձեռքից իրենց այգուն կից մի արտը գրավելն ու եղբորը քեհյայության աստիճանին բարձրացնելն էր:

Մամոյին էլ արբանյակ էր պետք, հոգևորականից էլ լավ գործակատար խո չէ՞ր կարող գտնել, անխնա մեծ-մեծ խոստումներ էր անում և հույսեր տալիս:

- Էլ ի՞նչ եք սպասում,– ասաց ծերունի Օհան աղբարը,– երևում է, որ էլ նա չի գալ… Ինչ որ ունիք խոսելու, սկսեցեք, էլի մենք մեր գլխի ճարը տեսնենք, թե չէ մեծատունն ու հոգևորականը իրենց գլխի դարդը թողած, խեղճի ու անճարի հոգսը չեն քաշիլ:

– Այսպիսի օր, երթ արյուն-արտասուք է թափում թշվառ ժողովուրդը,– ասաց մի ուրիշը,– նա բեգի սեղանին բազմած, որսերով լցնում է փորը և կուշտ-կուշտ ծիծաղեցնում մեր դահիճներին…

– Դրանք թողեք, դուք այն ասեք, թե ի՞նչ եք մտածում անել… էգուց չէ մեկէլ օր ժամանակը գալիս է, որտեղի՞ց ենք տալու էղնամի (անասնական հարկ) չորս հազար հինգ հարյուր դուրուշը (450 ռուբլի):

– Դրանք բոլորը վերջի բան է,– ասաց խոսքը կտրելով ծերունի Օհանը:– Դուք այն ասեք, ինչպե՞ս անենք, որ այս անօրենին գավառից դուրս հանենք: Սա իր ավազակներով թե կորչի, մնացյալներից ազատվելը հեշտ է:

– Բանն էլ այդտեղ է, որ այնպիսի դևերից չէ, որ մի խաչ հանելով չքվի…

– Գիտե՞ք ինչ կա,– ասաց բանտարկյալ Մինաս քեհյայի եղբայրը, բոլորի ուշադրությունը գրավելով յուր ծանր խոսակցությամբ,– եկեք մի աղերսագիր գրենք, վալիին տանենք և մեր ցավերը մեկ-մեկ հայտնենք ու ետ չդառնանք, մինչև արդար վճիռ չստանանք…

– Ո՞ւմ վրա, ո՞ւմ եք գանգատի գնում,– խոսքը ընդմիջեց Քյալաշ քեհյան, որ նոր ներս մտնելով դռան միջից լսում էր խոսակցությունը:– Դրանք դատարկ բաներ են, զուր տեղը մի քանի ամիս Արզրումի սարայի դռներում ու խաների (քարվանսարա) անկյուններում պիտի տանջվիք և հուսակտուր ետ դառնաք, այն էլ՝ թե բաց թողնեն… Այստեղ տուն-տեղ անտեր, անտիրական թողնել ու Արզրումի փողոցներում թափառելը խելքի մոտիկ բան չէ:

– Դու սովոր ես խոշոր-խոշոր խոսելու, մեծ-մեծ խոստումներ անելու,– ասաց ծանրությամբ ծերունի Օհանը,- բայց գլուխ բերած օգտաբեր գործդ չտեսանք, հիմի չես էլ թողնում, որ ուրիշները խոսին, տեսնենք նրանք ի՞նչ են մտածում . . .

– Ով ինչ կուզե մտածե, բայց բոլորը զուր է, ես իմ վերջնական որոշումս արել պրծել եմ, Թեմրանը շուտով կազատվի այդ անօրենի ձեռքից… Ավել խոսելու կարողություն չունիմ: – Այդ խոսքերը շատ–շատ ենք իմացել,– կրկնեց ծերունին,– բայց մեր դառը վիճակը ոչնչով չի փոխվել . . .

– Թողե՛ք խոսի, տեսնենք ինչ բան է նրա որոշումը,– ասաց գեղի համբաներից մեկը…

– Էլի ա զուր հույս,– պատասխանեց ծերունին:

– Այո՛, Թեմրանը շատ շուտով կազատվի Մամոյի ձեռքից, բայց թե ինչպե՞ս, այդ մի գաղտնիք է, որ վերջը կիմանանք . . .

– Ախր ի՞նչ գաղտնիք . . .

– Հրամմեր եք, դա մի խորհրդավոր գաղտնիք է,– ծաղրալի դեմքով յուր ընկերակիցների հետ ներս մտնելով ասաց Մամո բեգը:– Գաղտնիքը չի կարելի այդքան բազմության առաջ պարզել . . . Սուլո՛, Մստո՛, Հասո՛, կապկպեցե՛ք, շղթայեցե՛ք այս գյավուրներին, տարեք բանտ, այնտեղ ավելի լավ խորհուրդ կարող են կազմել:

Ձինված ավազակները հարձակվեցան անզեն թշվառների վրա և սկսեցին պինդ–պինդ շղթայել նրանց ձեռքերն ու ոտքերը: Այդ միջոցին մի քանի ճարպիկ ժողովականներ կարողացան խույս տալ, մի քանիսն էլ մտան ախոռ և անասուններին մսուրքների մեջ պահվեցան: Քյալաշ քեհյան շղթայակապ ամենից առաջ արժանացավ յուր շինել տված հաստ ու պինդ որմերով բանտում՝ առանձնական կյանք վարելու: